

կոչու՞մը ասկէ յետոյ հաստատուած է եւ իր անունը հրեշտակներու ձեռքով գրուած է ընտրեալներու զըրքին մէջ (L. S. S. էջ 30-32):

11. — Ս. Գերեզմանին հրեշտակի աւանդութիւնը (Է. դար). — Երուսաղէմը աղօթքի իբր մայրաքաղաք ընդունուած էր, ինչպէս ցոյց կուտայ հետեւեալ աւանդութիւնը: Ամէն կիրակի եկեղեցիներու պատարագներէն յետոյ, երբ բոլոր եկեղեցիներուն հրեշտակները կը միանան ու վեր կ'ելլեն ընդհանուր աշխարհի երախտիքը Աստուծոյ մատուցանելու, Ս. Գերեզմանին հրեշտակը միայն իրաւունք ունէր այս թափօրին գլուխը անցնելու և գայն Բարձրելոյն մատուցանելու համար: Անոր ընկերները՝ երբ կը տեսնեն որ՝ ան իրենց գլուխը չի գտնուիր, իրենց տեղը կը սպասեն թեւերնին խոնարհած: Որպէս զի հրեշտակները չուշանան Զաքարիա պատրիարքը (609-632) հրամայած էր որ Ս. Յարութեան պատարագը շատ կանուխ և շատ արագ կատարուի(*) (PAR. էջ 238-239):

12. — Պանդալէոն(**) բժիշկին պատկերի հրաւերը (Է. դար). — «Ս. Պանդալէոնի պատկերը նկարուած

(*) Ըստ աւանդութեան, Սրբութեան շիրմին հրեշտակները ոչ թէ մէկ կամ երկու են, այլ բազմաթիւ հրեշտակներ, ինչպէս կ'ըսէ երգը «գասուածային զգերեզմանան բոլորեալ դաս հրեշտակաց»: Անոնք էին որ անհետուրպապէս կը պատժէին հաւատոյ թեմամիները, որոնք կ'ուզէին աւերել Ս. Տեղերը եւ չկրցան (Հան. էջ 177):

(**) Նիկիոմիդացի Պանդալէոն բժիշկին մայրը քրիստոնէայ է եւ հայրը նախ հեթանոս եւ ապա քրիստոնէայ. Պանդալէոն նահատակուած է 300ին ի Նիկիոմիդա, եւ անոր անունով եկեղեցիներ շինուած են, որոնցմէ մին կը գտնուէր Յորդանանու անապատին մէջ: